

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Նախատեսվող գործունեության անվանումը՝

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տարածքից 110 կՎ «Ագարակ» օդային զծի տեղափոխման և 220 կՎ օդային զծի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման լրամշակված հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

(<< Մյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18)

Ձեռնարկողի ստորագրութունը՝

Գլխավոր տնօրենի տեղակալ՝ Արթուր Նիկողոսյան
20.06.2024թ.

«Ակունք Ֆիրմա» ՍՊԸ

Տնօրեն՝ Ն. Նիկողոսյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	6
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
2.1. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	11
2.1.1. Ջրայական տարրերակ	11
2.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	12
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	16
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	16
3.2. Տեկտոնիկա և սեյսմիկություն	17
3.3. Կլիմա և օդային ավազան	20
3.3.1. Կլիմայական պայմանները	20
3.4. Հողային ռեսուրսներ	24
3.4.1. Հողերի բնութագիրը	24
3.5. Ջրային ռեսուրսներ	25
3.5.1. Ողջի գետ Քաջարանի մոտ	25
3.5.2. Մեղրի գետ	28
3.6. Բուսական աշխարհ	30
3.7. Բուսական աշխարհ	31
3.8. Կենդանական աշխարհ	37
3.8.1. Ցամաքային անողնաշարներ	37
3.8.2. Ողնաշարավոր կենդանիներ	39
3.9. Պատմամշակութային հուշարձաններ	45
3.10. Էկոհամակարգեր և բնության հաստուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)	46
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
4.1. ՀՀ Սյունիքի մարզ	48
4.2. Քաջարան համայնք	51
4.3. Սպասարկում և ծառայություններ	53
4.4. Ժողովրդագրություն	54
5. ՄԱՆԻՏԱՐԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ	56
6. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ	56
6.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը շինարարական աշխատանքների ժամանակ	57
6.2. Օդային ավազան /110 ՕԳ/	57

6.3. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը.....	64
6.4. Արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկ.....	64
6.5. Օդային զիծ՝ 220 ՕԳ.....	67
6.6. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը	73
6.7. Արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկ.....	73
6.8. Ենթակայանի կառուցում.....	75
6.9. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը	80
6.10. Արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկ /Ենթակայան/.....	81
7. ՋՐԱՊԱՀԱՆՁՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ.....	83
8. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐ	86
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ	86
10. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇԻՆՍՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ	87
11. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ	88
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	90

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդր-սահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելիարտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006թ.)– Կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու

առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, 7

կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«ՀՀ Ջրային օրենսգիրք» (ՀՕ-373, 04.06.2002թ.) - կարգավորում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«ՀՀ Անտառային օրենսգիրք» (ՀՕ-211-Ն, 10.24.2005թ.) - կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-159-Ն 24.11.2004թ.) - կարգավորում է

թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու իրավական և տնտեսական հիմքերը:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

ՀՀ կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման ելքն արկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիրգիրքը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 14.08.2008թ. N967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը ել հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու ել ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության ել բնական պայմաններում վերարտադրության

նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:

- ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի N 947-Ն որոշում՝ «ՀՀ կառավարության 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 927-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 205-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

- ՀՀ Կառավարության 2 ապրիլի 2009 թվականի N363-Ն որոշում՝ «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»

- ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշում

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նախատեսում է «Ագարակ» 110կՎ ՕԳ-ի տեղափոխումը բացահանքի տարածքից՝ իրականացնելով գոյություն ունեցող հատվածի ապամոնտաժում: Համաձայն Տեխնիկական առաջադրանքի՝ ՕԳ-ի տեղափոխումը նախատեսված է գոյություն ունեցող NN18-32 հենարանների հատվածում: Ինչպես նաև նոր 220 ԿՎ ՕԳ և ենթակայանի կառուցում, բարձարացնելով տարածաշրջանում հուսալիությունը և ապահովությունը:

2.1. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Նախագծի նպատակն է ապահովել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին հուսալի և անխափան էլեկտրամատակարարմամբ: Նոր 220 ԿՎ օդային գծի կառուցումը հնարավորություն կտա թեթևացնել «Զանգեզուր» և «Դավիթ-Բեկ» 110կՎ օդային գծերի ծանրաբեռնվածությունը: Այն կբարձրացնի էներգետիկ համակարգի հուսալիությունը, վերահսկելիությունը տարածաշրջանում, իսկ հավելյալ հզորությունների ավելացումը կնպաստի տնտեսության զարգացմանը մարզում: Ինչպես նաև, նախատեսվում է կառուցել ենթակայան:

Ինչպես նաև նախագիծը ենթադրում է 110 ԿՎ ՕԳ-երի տեղափոխում բացահանքի տարածքից դուրս: Համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է բարձրավոլտ օդային գծերի (ՕԳ) կառուցումը՝ 110կՎ և ավելի հզորության: Օդային գծի կառուցումը ենթակա է փորձաքննության՝ «Բ» կատեգորիայի ընթացակարգով:

Ծրագիրն ունի նաև ստրատեգիական նշանակություն՝ Մեղրի և Ագարակ համայնքներում, և հարակից սահմանամերձ գյուղերում կտա անխափան հոսանքի մատակարարման ապահովման, հզորությունների ավելացման հնարավորություն:

ՕԳ անցկացման համար առկա են անհրաժեշտ համաձայնությունները համապատասխան լիազոր մարմիններից:

2.1.1. Զրոյական տարբերակ

Ներկայիս ՕԳ անցնում է բացահանքին կից տարածքով: Բացահանքի ընդլայնման պատճառով ՕԳ-ի հուսալիությունը նվազում է, ավելացնելով վթարի հավանականությունը: Դա կապված է նաև բացահանքում հորատապայթեցման և այլ

աշխատանքների իրականացման հետ: Բացի այդ, նոր ՕԳ կապահովի մոտակա բնակավայրերի անխափան էլեկտրամատակարարումը:

2.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Ապամոնտաժվող հատվածը հիմնականում կառուցված է 110կՎ “Սևան” տիպի հենարաններով: Ապամոնտաժվող հատվածի երկարությունը 2626.0մ է: Ուղեգծի սկիզբը (ՊԿ0+00) համարվել է գոյություն ունեցող ՕԳ-ի N32 110կՎ “Սևան” տիպի հենարանը, իսկ վերջը՝ (ՊԿ30+07) N18 110կՎ “Սևան” տիպի հենարանը: Ուղեգիծը անցնում է լեռնային լանդշաֆտով՝ բացարձակ նիշերը տատանվում են 2137.0մ-2405.0մ սահմաններում: Նախագծվող ՕԳ-ի ուղեգծի երկարությունը 3007.0մ է: Թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները: AC-150/34 հաղորդալարի շինարարական երկարությունը 2000մ է, թռիչքներում հաղորդալարերի միացումը նախատեսված է COAC-150-3 տիպի սեղմակներով: Հաղորդալարերի համար վիբրացիայի տատանամարիչներ չեն պահանջվում քանի որ, տարեկան միջին ջերմաստիճանի դեպքում հաղորդալարերում մեխանիկական լարումները չեն գերազանցում 4.0կգ/մմ²: Թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները: ՕԳ-ի շանթապաշտպանությունը նախատեսված է 1 հատ C-50 տիպի ճոպանով (նախատեսված հենարանների կառուցվածքից ելնելով):

ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական հենարաններ՝ ընդհանուր թվով 20 հենարան (9 հատ միջանկյալ և 11 հատ անկյունային): Ուղեգծի առավել թեք լանջերում, հողային աշխատանքները հնարավորինս փոքրացնելու նպատակով, նախատեսված են երկշղթա հենարաններ՝ առանց 3 հատ փոքր լայնակների (հենարան NN11; 14; 20): Ուժեղ քամուց, պահող շարանների թեքմամբ պայմանավորված, հաղորդալարի և հենարանի կոնստրուկցիայի միջև թույլատրելի եզրաչափը ապահովելու համար, նախատեսված են ПС110- 9В տիպի միջանկյալ հենարաններ: Նախագծային NN2-19 հենարանների համար նախատեսված են մոտեցման ճանապարհներ: Հենարանները ներկայացված են *Հավելված 1 և 2*-ում:

220 ԿՎ ՕԳ նախագծի նպատակն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ- ին հուսալի և անխափան էլեկտրամատակարարմամբ ապահովումն

է, որի համար պետք է կառուցվի 220/110/10կՎ նոր ենթակայան (*Հավելված 3 և 4*):
Ենթակայանը պետք է սնվի մուտք և ելք սխեմայով՝ կառուցելով նոր երկշղթա օդային
գլիծ: Այն հնարավորություն կտա թեթևացնել «Զանգեզուր» և «Դավիթ-Բեկ» 110կՎ
օդային գծերի ծանրաբեռնվածությունը:

Ենթակայանի կառուցման ծրագիրն ունի տարածաշրջանային մեծ
նշանակություն: Այն կբարձրացնի էներգետիկ համակարգի հուսալիությունը,
վերահսկելիությունը տարածաշրջանում, իսկ հավելյալ հզորությունների ավելացումը
կնպաստի տնտեսության զարգացմանը մարզում: Ծրագիրն ունի նաև
ստրատեգիական նշանակություն՝ Մեղրի և Ագարակ համայնքներում և հարակից
սահմանամերձ գյուղերում կտա անխափան հոսանքի մատակարարման
ապահովման, հզորությունների ավելացման հնարավորություն:

220կՎ ՕԳ-ի ուղեգիծը, «Մեղրի 1» ՕԳ-ի N110 և N111 հենարաններից մինչև
նախագծային N1 հենարանին միացումը, N1-N2 հենարանների 540մ թռիչքը անցնում է
բնակեցված տարածքով, նեղվածքային պայմաններում: NN2-6 հենարանների
հատվածում ՕԳ-ի ուղեգիծը անցնում է չբնակեցված, դժվարամատչելի տեղանքով,
լեռան թեք լանջով, չմշակվող, քարքարոտ հողերով: Ուղեգծի հիմնական մասը
անցնում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող
տարածքով: Օդային գծի շանթապաշտպանությունը պետք է իրականացվի
OPGW(օպտիկամանրաթելային մալուխ ներկառուցված շանթապաշտպան
ճոպանում) տիպի ճոպանով՝ մուտք-ելք սխեմայով:

«Մեղրի 1» 220կՎ ՕԳ-ի միացումը «Քաջարան» 220/110/10կՎ ԵԿ-ին
իրականացվում է մուտք և ելք սխեմայով՝ կառուցելով երկշղթա օդային գլիծ: «Մեղրի 1»
220կՎ ՕԳ-ի հաղորդալարը AC-400/51 տիպի է: Շաթապաշտպանությունը
իրականացված է OPGW օպտիկամանրաթելային մալուխով՝ ներկառուցված
շանթապաշտպան ճոպանում: Համաձայն տեխնիկական պայմանի, պետք է
իրականացվի նաև OPGW տիպի շանթապաշտպան ճոպանի մուտք-ելքը նոր
կառուցվող 220կՎ ԵԿ-ն: «Մեղրի 1» ՕԳ-ի խզումը նախատեսված է երկշղթա 220կՎ
“Մեղրի 1;2” ՕԳ-ի N110/N112 և N111/N113 երկշղթա խարսխաանկյունային
հենարաններից (N110/N112 և N111/N113 խարսխաանկյունային հենարանների միջև
թռիչքի երկարությունը 92մ է):

OPGW ճոպանի խզումը նախատեսված է «Մեղրի 1» ՕԳ-ի N111/N113 հենարանի վրա: Գոյություն ունեցող երկշղթա հենարանների համարակալուրը տրված է կոտորակի տեսքով: Համարիչում գրված է «Մեղրի-1» ՕԳ-ի համարը, իսկ հայտարարում՝ «Մեղրի-2 ՕԳ-ի համարը»: N110 և N111 հենարաններից, «Մեղրի 1» ՕԳ-ի հաղորդալարերը, համապատասխանաբար՝ 135մ և 82մ թռիչքներով, մոնտաժվում են նախագծային N1 Y220-2T+14 հենարանին: N1 հենարանից մինչև ԵԿ-ի պորտալները նախատեսված է երկշղթա հատվածի կառուցում: Երկշղթա հատվածի երկարությունը 1972մ է: Մեղրի 1 ՕԳ-ի մուտքի երկարությունը, գոյություն ունեցող N111 հենարանից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալ (ուղեգծի առանցքով), կազմում է 2055.0մ: Մեղրի 1 ՕԳ-ի ելքի երկարությունը, գոյություն ունեցող N110 հենարանից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալ (ուղեգծի առանցքով), կազմում է 2105.0մ:

ՕԳ-ի ուղեգծի նակարագրությունը

220կՎ ՕԳ-ի ուղեգիծը, «Մեղրի 1 » ՕԳ-ի N110 և N111 հենարաններից մինչև նախագծային N1 հենարանին միացումը, N1-N2 հենարանների 540մ թռիչքը անցնում է բնակեցված տարածքով, նեղվածքային պայմաններում: NN2-6 հենարանների հատվածում ՕԳ-ի ուղեգիծը անցնում է չբնակեցված, դժվարամատչելի տեղանքով, լեռան թեք լանջով, չմշակվող, քարքարոտ հողերով: Ուղեգծի հիմնական մասը անցնում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող տարածքով:

Անվտանգության գոտու սահմանը 220կՎ ՕԳ-ի ամենահեռու լարերից 25մ է: ՕԳ-ի առանցքի նկատմամբ, մի կողմից, կազմում է 31.6մ: Ընդհանուր լայնությունը կազմում է՝ $2 \times 31.6 \text{մ} = 63.2 \text{մ}$: Հենարանների տակ մշտական օտարման մակերեսները հաշվարկված են համաձայն СН 465-74 "Нормы отвода земель для эл. сетей":

Հաղորդալար

Նախագծվող երկշղթա ՕԳ-ի հաղորդալարն ընդունված է պողպատալյումինե AC-400/51 տիպի՝ համանուն «Մեղրի 1» ՕԳ-ի հաղորդալարի: Հաղորդալարում լարվածությունը ընդունված է $\sigma_{\max} = \sigma_0 = 9.5 \text{կգ/մմ}^2$; $\sigma_{\text{մշ}} = 6.35 \text{կգ/մմ}^2$: Թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները: Համաձայն տեխնիկական կանոնակարգի (§48 աղյուսակ 6.22), հաղորդալարի եզրաչափը հողից 8.0մ է: Լանջով

անցնող հատվածներում, որպես դժվարամատչելի տեղանք, NN2-5 հենարանների հատվածում, հողից ապահովված է 6.0մ գաբարիտը (հաշվի է առնված լանջի թեքությունները): AC-400/51 հաղորդալարի շինարարական երկարությունը 1500մ է, թռիչքներում հաղորդալարերի միացումը նախատեսված է CAC-500-1 տիպի սեղմակներով: Շլեյֆներում հաղորդալարերի միացումը նախատեսված է ПА-6-1 տիպի սեղմակներով (երկուական սեղմակ յուրաքանչյուր միացման համար): Շլեյֆի կախվածքը պետք է լինի 2.5մ՝ ապահովելով տեխնիկական կանոնակարգի աղյուսակ 6.17-ի պահանջը:


220կՎ ՕԳ-ում նախատեսված հենարաններ և հիմքեր

ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական, ցինկապատ երկու ճապանականգնակով 6 հատ հենարան՝ որոնց թվում 5 հատ արսխաանկյունային տիպի և 1 հատ միջանկյալ: Ստորև ներկայացված է հենարանների տիպերը և քանակը.

1. Երկշղթա խարսխաանկյունային Վ 220-2 τ +14 տիպի – 3 հատ (N1, 5; 6) 2. Երկշղթա խարսխաանկյունային Վ 220-2 τ +5 տիպի – 2 հատ (N2, 4) 3. Երկշղթա միջանկյալ П С 220-6 τ +1.8 տիպի –1 հատ (N3) Հենարանների պատրաստման համար պողպատի մակնիշը ընդունված է С345 (09 Г 2 С) ԳՈՍՏ 27772-88, կոռոզիայից աշտպանությունը իրականացվում է գործարանային պայմաններում՝ տաք ցինկապատմամբ, 100մկմ հաստությամբ շերտով, համաձայն ԳՈՍՏ 9.307-89 և С Н и П 2.03.11-85 ահանջներին: Մետաղակոնստրուկցիայի տեղափոխումների կամ շինարարական աշխատանքների ժամանակ, մետաղակոնստրուկցիայի պաշտպանիչ շերտի վնասվածքի դեպքում, այն պետք է պաշտպանվի Л И Н О Л (գրունտ 2 շերտ 80մկմ հաստությամբ) և պատվի հակակոռոզիոն կոմպոզիցիայով՝ А Л П О Л (2 շերտ 60մկմ հաստությամբ):

Նախատեսվում է կառուցել 110/10կՎ ենթակայան 40 ՄՎԱ նախագծային հզորությամբ: Ենթակայանը հավաքավելու է բլոկ-մոդուլային տիպ 110 և 10 կՎ Փակ Բաշխիչ Սարքերի (ՓԲՍՅՄ) համար, փակուղային կատարմամբ, առանց օպերատիվ սպասարկման անձնակազմի մշտական ներկայության: Ենթակայանը աշխատելու է հեռակառավարմամբ:

Ներկայացվում է հենասյուների շրջադարձային կետերի կոորդինատները՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով (տես՝ ստորև նշված քարտեզը):



3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան համայնքում: Հաղորդալարերի անցկացման տարածքի որոշակի հատված համընկնում է անտառային տարածքի հետ, որտեղ հենարանների համար անտառածածք տարածքներում հնարավորինս ընտրվել են ծառերից թփուտներից ազատ բացատներ: Սակայն, եթե որևէ հատվածում խախտվի անտառային տարածքը, ապա այն կվերականգնվի ՀՀ անտառային օրենսգրքի և դրան առնչվող այլ իրավական ակտերի դրույթների համաձայն:

Շրջանը բնութագրվում է ինտենսիվ մասնատված լեռնաշղթաների, նեղ լեռնաշխարհային սարավանդների, խոր ձորերի և հովիտների առկայությամբ: Տեղանքի ռելիեֆը լեռնային է, բարդ, խիստ կտրտված: Երկրաձևաբանական տեսակետից

շրջանը վերաբերվում է հասուն, խիստ կտրտված ռելիեֆի գոտուն: Լեռնագագաթների բացարձակ նիշերն են՝ Կապուտջուղ – 3904 մ, Եղասար – 3829 մ, Ղազանլիճ – 3650 մ, Ախմեջիթ – 3637 մ: Շրջանի ռելիեֆը կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային տիպի է, V-աձև նեղ հովիտներով: Ռելիեֆ առաջացնող արտածին երևույթներից բնորոշ են ուժեղ ինտենսիվության սելավները [1]:


3.2. Տեկտոնիկա և սեյսմիկություն

Տեկտոնական տեսակետից տարածքը գտնվում է Սիսիան-Ջանգեզուր գեոանտիկլինալ գոտու հարավային մասում, որտեղ բացակայում է էֆուզիվ գոյացությունների ծածկույթը: Տարածքը մտնում է Սյունիքի սեյսմոակտիվ գոտու մեջ, որի գեոդինամիկայի բնույթը և սեյսմիկանհիմնականում պայմանավորված են ակտիվ խզման խախտումներով: Այստեղ զարգացած են հյուսիս-արևմտյան և ենթամիջօրեականային խզվածքների խախտման համակարգը [2-4]: Մակերևույթի վրա Սյունիքի գոտին ներկայացված է Խուստուփ-Գիրաթաղի, Տաշտունի և Գեղիի երեք զուգահեռ խզվածքներով: Քաջարան քաղաքի շրջանում խզվածքի գոտին կազմող ապարները խիստ տրորված են, 51 ջարդոտված, ապաթերթաքարացված: Ավելի ցածր կարգի բազմաթիվ տարաբնույթ խզումներից կարելի է նշել Ողջիի խզվածքը, որը հատում է Քաջարան քաղաքի տեղադրման շրջանը ենթալայնական ուղղությամբ: Համաձայն ՀՀ-ում գործող սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի ՀՀՇՆ 20.04-Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր [5], տարածքը պատկանում է 2-րդ գոտուն, որի սեյսմիկության քանակական գնահատականը բնութագրվում է սպասվող առավելագույն արագացմամբ $A_{max} = 0.4g$ և գրունտի հորիզոնական արագացման մեծությունը $a = 400$ սմ/վրկ² :


Նկար 1. Մեյամիկ գոտիներ



Դիտարկվող տարածքում բացառիկ դեր է կատարում Տաշտունի II կարգի խզվածքը, որը անցնում է ենթամիջօրեականային ուղղությամբ (հյուսիս-արևելյան տարածում) ք.Ագարակ - գ.Լիչք - Տաշտունի լեռնանցք - ք.Քաջարան - Որոտանի լեռնանցք: Խզվածքը վարնետքային տիպի է, իջված 55-65° անկյան տակ հյուսիս-արևելյան և բարձրացված հարավ-արևմտյան թևով (տես Նկար 2.):



Նկար 2. Տարածաշրջանի խզվածքների քարտեզը



Պայմանական նշանակումներ

Քաջարան քաղաքի շրջանում խզվածքի գոտին կազմող ապարները խիստ տրորված են, ջարդոտված և ապաթերթաքարացված: Ավելի ցածր կարգի բազմաթիվ տարաբնույթ խզումներից կարելի է նշել Ողջիի խզվածքը, որը հատում է Քաջարան քաղաքի տեղադրման շրջանը ենթալայնական ուղղությամբ:


Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգության նկարագիրը բերված է ստորև Աղյուսակ 3.2.1-ում:

Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգությունը

Աղյուսակ 3.2.1

Գործոնը	Նկարագիրը
Սելավավտանգավորությունը	Կարգը՝ 1-ին կարգ Հաճախականությունը՝ ուժեղ Սելավաբերությունը՝ ուժեղ (15-35 ս ³ /կմ ²)Տիպը՝ ցեխաքարային
Սեյսմիկ շրջանացումը	Գտնվում է 9 բալանոց ուժգնության գոտում
Սողանքավտանգավորությունը	Բարձր վտանգավորության գոտի է: Առկա են խոշոր սողանքային տարածքներ՝ մի քանի ակտիվ օջախներով:

Սողանքներ



Նկար 3. Սողանքներ

ՀՀ սողանքային աղետի կառավարման ծրագրի համաձայն՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության ծրագիր, 2017թ. օգոստոս, նոր ՕԳ տարածքում բացակայում են սողանքները:

3.3. Կլիմա և օդային ավազան


3.3.1. Կլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության համար հայցվող տարածքների կլիմայական պայմանների նկարագրությունը տրված է ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167- Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին

երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով:

Ստորև ներկայացվում է ՀՀ կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզը, որը ներբեռնվել է «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից: Համաձայն այդ քարտեզի. ՕԳ տարածքը գտնվում է կլիմայական «Ցուրտ» շրջանում:

«Ցուրտ» կլիմայական շրջանին բնորոշ է. (ա) Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ: (բ)



Նկար 4. Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

Շրջանի կլիմայական բնութագրերը Քաջարան քաղաքի համար բերված են Աղյուսակ 3.4.1.1 - Աղյուսակ 3.4.1.4-ում՝ համաձայն «Շինարարական

կլիմայաբանության» ՀՀՇՆ II-7.01-2011 [6]:

Բացահանք՝ օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +7°C; բացարձակ մինիմալ ջերմաստիճանը -22°C, իսկ բացարձակ մաքսիմումը հասնում է + 34°C:

Օդի ջերմաստիճան, °C

Բնակավայր	Միջինը ըստ ամիսների												Միջին տարեկանը	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Քաջարան	-3,2	-3,0	0,3	6,1	10,0	14,2	17,0	16,7	13,5	8,2	3,2	-1,3	6,8	-22	34

Օդի հարաբերական խոնավությունը, %

Բնակավայր	Միջին ամսական												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
Քաջարան	66	69	71	68	72	68	63	65	69	71	68	67	68	67	52

Մթնոլորտային տեղումները և ձյան ծածկույթը

Շրջանի համար բնորոշ է տեղումների զգալի քանակություն: Տեղումների քանակը և նրանց ձևերի հարաբերությունը կախված է տեղանքի բարձրությունից:

Քաջարանում ձնածածկույթը հայտնվում է նոյեմբերին, իսկ նրա վերացումը տեղի է ունենում մարտի վերջից մինչև ապրիլի կեսերը, ձնածածկույթը դիտվում է միջինը 112 օր: Ձյան ծածկույթի առավելագույն տասնօրյակում կազմում է 91 սմ: Ջրի առավելագույն պաշարը ձյան մեջ կազմում է 242մմ:

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայր	միջին ամսական												Տարեկան	Ձնածածկույթ		
	Տեղումների քանակը						մմ							Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Քաջարան	42	51	69	80	86	48	22	18	27	52	48	42	585	91	112	242
	44	33	62	66	65	45	37	66	36	38	52	36	66			

Քամիները

Քաջարանի շրջանում տարվա ցուրտ ժամանակաշրջանում քամու գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին հյուսիս-արևմտյան է: Տարվա տաք ժամանակաշրջանում քամու գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին

արևելյան է:

Մթնոլորտային տեղումները և ձևաձևկոյթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ		
			Միջին արագությունը, մ/վ												20	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15			
Քաջարան	817.3	հունվար	5	1	13	27	6	9	19	20	58	1.2	1.2	11	24	27	30
			2.7	3.0	1.9	2.2	2.5	3.1	3.6	4.1							
		ապրիլ	4	1	17	42	6	6	11	13	50	1.3					
			2.5	2.5	2.1	2.2	2.0	2.7	3.3	3.2							
		հուլիս	2	1	28	56	3	1	2	7	49	1.3					
			1.7	1.6	2.4	2.8	2.0	1.9	1.9	1.9							
		հոկտեմբեր	3	1	23	39	4	6	13	11	60	1.0					
			2.6	2.5	1.9	2.4	2.0	2.6	3.1	2.9							

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիան ներկայացվում է հիմք ընդունելով «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում տեղադրված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»


Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

3.4. Հողային ռեսուրսներ

3.4.1. Հողերի բնութագիրը

Ուսումնասիրվող հողատարածքները պատկանում են լեռնանտառային դարչնագույն հողերի տիպին: Ջանգելուրի լեռնաշղթայում այս հողատիպը տարածված է հիմնականում 500- 1700մ ծ.մ. բարձրությունների վրա, իսկ հարավային դիրքադրության լանջերում դրանք հասնում են մինչև 2400մ բարձրության, այդ թվում Քաջարան քաղաքի շրջակա տարածքներում: Լեռնային դարչնագույն անտառային հողերի ռելիեֆը բնորոշվում է բազմաթիվ բարձրունքներով՝ լեռնաշղթաների տեսքով և ջրաբաժան լեռնագագաթներով, ինչպես նաև իջվածքներով, որոնք իջնում են կիրճեր և գետահովիտներ: Հողերի այս տիպի հիմնական հողագոյացնող ապարներն են հանդիսանում պորֆիրիտների, դոլոմիտների, կրաքարի, կոնգլոմերատների, ավազի, գրանոդիորիտների քայքայված կառուցվածքները: Դրանք հիմնականում ներկայացված են հողմնահարված կարբոնատային և բարձր հիմնային ավազակավով, որոնց հզորությունը կարող է հասնել 1,5-2մ:

Լեռնային դարչնագույն անտառային հողերի մեջ տարբերում են կրազերծված, տիպիկ և կարբոնատային ենթատեսակներ [7]:



Նկար 5. Հողերի տեսակների քարտեզ

3.5. Ջրային ռեսուրսներ

3.5.1. Ողջի գետ Քաջարանի մոտ

Ողջի գետի ջրհավաք ավազանը մտնում է Հարավային ջրավազանային կառավարման տարածքը (ՋԿՏ): Ողջին անդրսահմանայի գետ է, գետավազանի ընդհանուր մակերեսը կազմում է 2337 կմ², որից ՀՀ տարածքում՝ 1240.47 կմ²: Գետի ընդհանուր երկարությունը 82 կմ է, այդ թվում ՀՀ տարածքում՝ 52 կմ:

Ողջին Արաքս գետի ձախափնյա վտակն է և համարվում է իր մեծությամբ Սյունիքի մարզի երկրորդ գետը, Որոտանից հետո: Ողջի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ լեռան հարավ-արևելյան լանջից 3650մ բարձրության վրա, Կապուտջուղ և Քաջարան գետերի միացումից, և թափվում է Արաքս գետ ձախ ափից 350մ բարձրության վրա:

Ողջի գետի ավազանին բնորոշ է ապարների թույլ ջրանցիկություն, այդ իսկ պատճառով մթնոլորտային տեղումները բերում են մակերևութային հոսքի առաջացմանը, ինչի արդյունքում գետի ավազանը ունի զարգացած ջրագրական ցանց:

Ողջին տիպիկ լեռնային գետ է, նեղ ոլորապտույտ հունով, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային առվակներ: Իր ճանապարհին Ողջի գետն ընդունում է մի շարք վտակներ՝ Ծաղկար, Բաղաճաջուր, Դավազամի, Փխրուտ, Գեղի, Գիրաթաղ, Վաչազան, Արծվանիկ, Աճանան և այլն: Ողջի գետի խոշոր վտակները Գեղին և Աճանանն են, մյուս վտակները փոքր են՝ աննշան հոսքերով: Ողջի գետ են թափվում նաև ժամանակավոր ջրահոսք ունեցող զգալի քանակի վտակներ, որոնք պարբերաբար բերում են իրենց հետ սելավային բնույթի ջրաքարային հոսքեր:

Գետի սնուցումը խառն է, մթնոլորտային տեղումների, հալոցքային և գրունտային ջրերի հաշվին, սակայն գերակշռում է հալոցքային սնուցումը (60-70%):

Ողջի գետի և նրա վտակների ներտարեկան ջրի հոսքը բաշխված է անհավասարաչափ: Ամենամեծ հոսքը դիտվում է գարնանը և ամռան սկզբին (մարտ-հունիս ամիսներին), երբ գետերով անցնում է ընդհանուր տարեկան հոսքի կեսից ավելին: Դա բացատրվում է նրանով, որ գետերը այդ ժամանակ սնուցվում են ձնհալքի ջրերով և անձրևաջրերով: Առավել քիչ գետային հոսքը դիտվում է ձմռան և աշնան

ամիսներին, այդ ժամանակ գետերը սնուցվում են միայն ստորգետնյա ջրերից: Գետերի ջրային ռեժիմը բնութագրվում է խիստ ընդգծված զարնանային վարարությամբ և մնացած ժամանակը բավականին կայուն նվազամակարդակով: Սակայն, առանձին տարիներ հորդառատ անձրևների ժամանակ դիտվում են վարարման և սելավների գագաթնակետեր:

Ողջի գետի աղտոտվածության վերաբերյալ տեղեկավորությունը ներկայացվում է ստորև.

ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ 14 ԽՈՇՈՐ ԳԵՏԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ
 ԳԵՏԵՐԻ ՈՒ ԳԵՏԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՈՂՋԻ ԳԵՏԻ ԳԵՏԱՎԱԶԱՆԻ ԳԵՏԵՐԻ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ
 ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
Լուծված թթվածին	>7	>6	>5	>4	<4	մգO ₂ /լ
ԹԿՊ ₅	3	5	9	18	>18	mgO ₂ /l
ԹՔՊ-Cr	10	25	40	80	>80	մգO ₂ /l
Ամոնիում իոն	0.017	0.4	1.2	2.4	>2.4	մգ N/լ

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
Նիտրիտ իոն	0.003	0.06	0.12	0.3	>0.3	մգ N/լ
Նիտրատ իոն	0.194	2.5	5.6	11.3	>11.3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0.032	0.1	0.2	0.4	>0.4	մգ/լ
Ցինկ, ընդհանուր	3	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	4	24	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	0.46	10.46	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	0.27	20.27	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	0.1	1.1	2.1	4.1	>4.1	մկգ/լ
Կապար, ընդհանուր	0.1	10.1	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	0.64	10.64	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	15	30	60	120	>120	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	4	8	16	32	>32	մկգ/լ
Վանադիում, ընդհանուր	0.38	0.76	1.52	3.04	>3.04	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	0.09	0.18	0.36	0.72	>0.72	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	0.031	0.062	0.5	1	>1	մգ/լ
Կալցիում	18.3	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	4.8	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	20	40	80	1000	>1000	մկգ/լ
Բերիլիում	0.028	0.056	0.112	100	>100	մկգ/լ
Կալիում	1.45	2.90	5.81	11.62	>11.62	մգ/լ
Նատրիում	5.3	10.6	21.2	42.4	>42.4	մգ/լ
Լիթիում	5	5		<2500	>2500	մկգ/լ
Բոր	32	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	30	60	120	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	1.1	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	0.5	1	2	4	>4	մկգ/լ
Անագ, ընդհանուր	0.077	0.154	0.308	0.616	>0.616	մկգ/լ
ԹՔՊ-Mn	5	10	15	20	>20	մգO ₂ /լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	0.122	4	8	16	>16	մգ N/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0.016	0.2	0.4	1	>1	մգ լ
Քլորիդ իոն	6	12	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	26.72	53.44	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	7.1	14.2	28.4	56.8	>56.8	մգSi/լ
Ընդհանուր հանքայնացում	105.8	211.6	1000	1500*	>1500	մգ/լ
Էլեկտրոհաղորդականություն	168.5	337	1000	1500*	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	1.5	10	20	40	<40	մգէկվ/լ
Կախված մասնիկներ	8.4	10.1	16.8	33.6	>33.6	մգ/լ
Հոտ(20°C and 60°C)	<2(բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գոլյն	(բնական)	<5(բնական)	20	30	>200	աստիճան

*որոգման համար 1000

Ողջի գետի (Քաջարան քաղաքն ընկնող երկու հատվածում) հիդրոչափական,

ձևաչափական, հիդրոլոգիական բնութագրերը բերված է 2.6.1 աղյուսակում՝ ըստ ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի բազմատարյա դիտարկումների տվյալների հիման վրա:

Ողջի գետի բազմամյա միջին տարեկան հոսքի հիմնական բնութագրերը


Աղյուսակ 2.6.1

Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Գետի հոսք					
		միջին տարեկան ելքը, մ ³ /վրկ	գետի հոսքի մոդուլը, լ/վրկ.կմ ²	գետի հոսքի ծավալը, մլն.մ ³	Սեզոնային բաշխումը, %		
					III-VI	VII-XI	XI-II
գ.Ողջի- ք.Քաջարան	120	3.16	26.3	99.67	58	37	7

3.5.2. Մեղրի գետ

Մեղրի գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լեռնաբազուկի 3229 մ բարձրության վրա գտնվող Սև (Գեկ-Գյոլ) լճից՝ Լիճք գյուղից 9 կմ դեպի արևմուտք: Այն հանդիսանում է Արաքսի ձախակողմյան վտակը, ձգվում է միջօրեականի ուղղությամբ և ամբողջությամբ հոսում է մարզի տարածքով:

Նկ.6: Մեղրի գետի ջրհավաք ավազանի քարտեզը (մինչև Վարդանաձոր բնակավայր)



Մասշտաբ 1:70 000

Գետն ունի անձրևային և մասամբ ստորերկրյա սնուցում: Գետի ընդհանուր

երկարությունը 36 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 274 կմ², տարեկան հոսքը՝ 105 մլն. մ³, միջին տարեկան ծախսը Մեղրի դիտման կայանի տվյալներով՝ 3,23 մ³/վրկ [4]: Բացաձարկ առավելագույն գրանցված ծախսը կազմել է ավելի քան 87 մ³/վրկ:

Մեղրիգետի հորդացումը սկսվում է մարտի առաջին տասնօրյակին, մակարդակը մեծ բարձրության է հասնում մայիսին, նվազումը տեղի է ունենում համեմատաբար դանդաղ: Աշնանային հորդացումներ համարյա չեն դիտվում, սակայն ձմռանը ջրի հոսքը աշնանայի-նից պակաս է: Մեղրիգետը թույլ սելավավտանգավոր է: Մեղրիգետի հաշվարկային հիդրոլոգիական և հիդրոգրաֆիական բնութագրերը բերված են 2.6.2-2.6.5 աղյուսակներում՝ Լիճք դիտակետում կատարվող դիտարկումների հիման վրա:

Մեղրիգետի հիդրոլոգիական պարամետրերը

Աղյուսակ 2.6.2

Գետ-դիտակետ	Երկարությունը, կմ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Գետի հոսքի մոդուլը, լ/վրկ.կմ ²	Հոսքի շերտը, մ
Մեղրիգետ-Լիճք	10.2*	21.0	35.2	1112

* մինչև Լիճք դիտակետը

Հիդրոգրաֆիական բնութագրիչները

Աղյուսակ 2.6.3

Գետ-դիտակետ	Հունի գերակշիռ լայնությունը, մ	Հունի միջին խորությունը, մ	Միջին արագությունը, մ/վրկ	Միջին տարեկան ջերմաստիճանը, °C
Մեղրիգետ-Լիճք	6.7	0.18	1.21	4.9

Հիդրոլոգիական բնութագրիչները

Աղյուսակ 2.6.4

Գետ-դիտակետ	Տարեկան բազմամյա միջին ելքը, մ ³ /վրկ	Հոսքի ծավալը, մլն. մ ³	Առավելագույն ելքը, մ ³ /վրկ	Բացարձակ նվազագույն ելքը, մ ³ /վրկ	Միջին ելքը 95% ապահովվածության դեպքում, մ ³ /վրկ
Մեղրիգետ-Լիճք	0.74	23.4	7.53	0.12	0.51

Մեղրիգետ գետի ելքերն ըստ ամիսների (Լիճք դիտակետ)

Աղյուսակ 2.6.5

Բազմամյա ելքը, մ ³ /վրկ	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Միջին	0.13	0.15	0.31	0.62	1.48	2.74	1.69	0.67	0.35	0.23	0.19	0.15
Նվազագույն	0.30	0.37	0.35	0.95	2.29	4.20	3.26	1.59	0.49	0.60	0.62	0.33
առավելագույն	0.011	0.010	0.017	0.17	0.71	1.24	0.49	0.098	0.046	0.022	0.019	0.019

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Մեղրի գետի ջրերի որակի մոնիտորինգը կատարվում է միայն 2 դիտակետում՝ Մեղրի քաղաքից 0.5կմ վերև (N89) և գետաբերանում (N90) [2]:

Համաձայն ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020-2021 թթ. տվյալների, Մեղրի գետի ջրերի որակը վերոնշված 2 գետահատածքներում տատանվում է III - V դասերի սահմաններում: Գետի ջրերի որակը հիմնականում որոշվում է ըստ որոշ մետաղների (Mn, Al, Co, Be, Fe), կախված նյութերի և ամոնիում-իոնի:

3.6. Բուսական աշխարհ

Բուսա-աշխարհագրական տեսակետից տարածքը պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978) [8]:



Նկար 7. ՀՀ Սյունիքի մարզի ֆլորիստիկ շրջանները (Թախտաջյան, 1978)
(1 – Զանգեզուրի, 2 – Մեղրիի)

Տարածաշրջանի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, մարգագետնատափաստանները, անտառները, ինչպես նաև գետամերձ

բուսականությունը: Տարածքում տեղ-տեղ արտահայտված է թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը:

Ֆոնային բուսատեսակները համեմատաբար քիչ են, ֆլորան հիմնականում ծառաթփային և տարախոտային է: Տարածքների վերին հատվածներում անտառները արտահայտված են արևելյան կաղնու, իսկ ստորին հատվածներում՝ վրացական և արաքսյան կաղնիների անտառակներով: Բացի կաղնուց, բնափայտավոր բուսատեսակները արտահայտված են կովկասյան բոխու, կովկասյան և զանգեզուրի տանձենիների, թխկու, սալորենու, տեղ-տեղ կեչու ծառերով, գիհու, սզնու, մասրենու, տրագականթային գազերի և այլ թփերով ու կիսաթփերով: Շատ տեղերում զարգացել է երկրորդային բուսականությունը:

3.7. Բուսական աշխարհ

Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2011), Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը (2010), (Կանաչ Հայաստան, 2016) և այլն: Ծառաթփատեսակների որոշումների համար օգտագործվել են մի շարք հրատարակություններ (Հարությունյան, 1985, 1987; Варданян, 2012; Дендрофлора Кавказа, 1961, Деревья и кустарники, 1951): Հայաստանի բնակամիջավայրերը տրվել են ըստ Գ. Ֆայվուշի և Ա. Ալեքսանյանի ձեռնարկի (2016):

Տարածքում հանդիպող բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից են Դորոնիկում Բալանգայի – *Doronicum balansae* Cavill. – EN B 1 ab(iii) + 2 ab(iii) և Բանպոտ նիզականման – *Polyestichum lonchitis* (L.) Ruth.—EN B 1 ab(iii) + 2 ab(iii) տեսակները:

Աղյուսակ 3.6.1.

Տարբան (դաս, կարգ, ընտանիք, ցեղ, տեսակ)	Տեղակայություն	Բիոտոպ	Հայաստանի Կարմիր գիրք	IUCN, International Union for Conservation of Nature	Էնդեմներ
Լատինական անվանումը	Հայերեն անվանումը Անգլերեն անվանումը				
Kingdom - PLANTAE	Թագավորություն - ԲՈՒՅՍԵՐ				

Տարբուն (դաս, կարգ, ընտանիք, ցեղ, տեսակ)		Տեղակայություն	Բիոտոպ	Հայաստանի Կարմիր գիրք	IUCN, International Union for Conservation of Nature	Էնդեմներ
Class - ANGIOSPERMAE	Դաս - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ					
Order - Dicotyledones	Կարգ - Երկշաքիլավորներ					
Լատինական անվանումը	Հայերեն անվանումը Անգլերեն անվանումը					
Campanulaceae	Ջանգակազգիներ					
Campanula zangezura (Lipsky) Kolak. et Serdjuk.	Ջանգակ զանգեզուրի	07.05.2016	Մարգագետին	EN B		Էնդեմ /Մեղրի, Ջանգեզուր, Քարադաղ-Իրան/
Plantaginaceae	Ջղախտազգիներ					
Plantago major L.	Ջղախտ, Եզան լեզու մեծ	06.05.2016	Պարսպուտ / Heathland			

Բուսատեսակների ցանկ

Աղյուսակ 3.6.2.

Տարբուն (դաս, կարգ, ընտանիք, տեսակ)		Բիոտոպ	Հայաստանի Կարմիր գիրք	IUCN, International Union for Conservation of Nature	Էնդեմներ
Լատինական անվանումը	Հայերեն անվանումը Անգլերեն անվանումը				
Kingdom - PLANTAE	Թագավորություն - ԲՈՒՅՍԵՐ				
Class - EQUISETOPSIDA	Դաս - ՉԻԱՉԵՏԵՐ				
Equisetaceae	Չիաձետազգիներ				

Տարբերակ (դաս, կարգ, ընտանիք, տեսակ)		Բիոտոպ	Հայաստանի Կարմիր գիրք	IUCN, International Union for Conservation of Nature	Էնդեմներ
Equisetum arvense L.	Չիաձեռ դաշտային	Ջրամերձ			
Class - ANGIOSPERMAE	Դաս - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ				
Order - Monocotyledones	Կարգ - Միաշաքիլավորներ				
Iridaceae	Հիրիկազգիներ				
Iris imbricata Lindl.	Հիրիկ կղմինդրային	Տափաստան			
Typhaceae	Կեռնազգիներ				
Typha latifolia L.	Որձախոտ, Կեռն լայնատերև	Ջրամերձ			
Order - Dicotyledones	Կարգ - Երկշաքիլավորներ				
Aceraceae -	Թխկազգիներ				
Acer campestre L.	Թխկի դաշտային	Անտառ			
